## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

**Ստուգաթերթ N 29**

**Մասնագիտացված բժշկական օգնություն**
**Գործառույթներ՝ Մանրէազերծման ծառայություն**

______________________ (տեսչության տարածքային մարմնի անվանումը) ______________________ (հասցեն) ______________________ (հեռախոսահամարը)

______________________ (ստուգող անձի պաշտոնը) ______________________ (ազգանունը, անունը, հայրանունը)

______________________ (ստուգող անձի պաշտոնը) ______________________ (ազգանունը, անունը, հայրանունը)

______________________ (ստուգող անձի պաշտոնը) ______________________ (ազգանունը, անունը, հայրանունը)

ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ ______________________ ավարտը՝ ______________________

______________________ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը) ______________________ (ՀՎՀՀ-ն)

______________________ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) ______________________ (հեռախոսահամարը)

______________________ (տնտեսվարող սքուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) ______________________ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր ________ ում կողմից ______________ երբ է տրված ______________

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ ______________________________

| N | Հարց | այո | ոչ | չ/պ | կշիռ | հղում | Ստուգման մեթոդ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ստացիոնարում (բաժանմունքում) օգտագործվող փափուկ գույքի մանրէազերծումը կազմակերպվում է կենտրոնացված ձևով: | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձաhինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 2. | Փափուկ գույքի մանրէազերծման բաժինն ունի հետևյալ սենքերը՝ | | | | | | | |
| 2.1 | վիրակապական գույքի, | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 2.2 | ռետինե ձեռնոցների մշակման և փաթեթավորման սենք, | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 2.3 | մանրէազերծման սենք /Նշում 1/, | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 2.4 | մանրէազերծված գույքի պահման սենք: | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 3. | Գործիքների լվացման և մանրէազերծման սենքը առնվազն 6 մ2 մակերես ունի /Նշում 2/: | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 4. | Գործիքների մանրէազերծումը կազմակերպվում է կենտրոնացված ձևով կամ անմիջապես կաբինետներում՝ բացառելով մանրէազերծ և կեղտոտ գործիքների շփումը : | | | | 2 | Հղում 1, կետ 12 | տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 5. | Ծնունդ ընդունելուց հետո օգտագործված գործիքները մանրէազերծվում են սահմանված կարգով՝ համաձայն հավելվածի /Նշում 3/ : | | | | 3 | Հղում 1, կետ 121 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 6. | Բուժսպասարկում իրականացնելիս օգտագործված գործիքների ախտահանումը, | | | | 3 | Հղում 1, կետեր | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախամանրէազերծումային մշակումն ու մանրէազերծումն իրականացվում է սահմանված կարգով /նշում 4, որոշիչ/: | | | | | 154,155 | | ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 7. | Գործիքների նախամանրէազերծման և լվացման աշխատանքները իրականացվում են առանձին կենտրոնական մանրէազերծման բաժանմունքում կամ յուրաքանչյուր բաժանմունքում այդ աշխատանքների համար առանձնացված է սենք : | | | | 2 | Հղում 1, կետ 156 | Տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 8. | Այն առարկաները, որոնց օգտագործման ժամանակ հնարավոր չէ միկրովնասվածքների առաջացումը և այն առարկաները, որոնք չեն շփվում լորձաթաղանթի, վերքային մակերեսների, արյան կամ ներարկման պատրաստուկների հետ՝ ենթարկվում են ախտահանման: /նշում 5/: | | | | 2 | Հղում 1, կետ 158 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 9. | Լորձաթաղնաթի, վերքային մակերեսների, արյան և նրա պատրաստուկների հետ շփվող առարկաները, լորձաթաղանթների հետ շփվող և մաշկի հնարավոր վնասում առաջացնող գործիքները ենթարկվում են մանրէազերծման՝ սահմանված կարգով, համաձայն հավելվածների /նշում 6, որոշիչ/: | | | | 3 | Հղում 1, կետեր 176, 177 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 10. | Նախամանրէազերծումային մշակումը իրականացվում է մեխանիկական եղանակով կամ ձեռքով՝ սահմանված կարգով /նշում4 և 7/: | | | | 2 | Հղում 1, կետեր 171,172, 173 | Տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 11. | Քայքայման տեսանելի հետքերով և օքսիդացման շերտով գործիքները ենթարկվում են քիմիական մաքրման՝ օքսիդացված և քայքայված շերտից ազատվելու համար: | | | | 2 | Հղում 1, կետ 175 | Տեսողական | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 12. | Բժշկական գործիքները, կարի և վիրակապական նյութը ենթարկվում են մանրէաբական հսկողության՝ մանրէազերծման որակի վերաբերյալ: /նշում8/: | | | | 2 | Հղում 1, կետեր 203,204,211 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում, բաժանմունքներում |
| 13. | Բազմակի օգտագործման բժշկական նշանակության առարկաները . | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13.1 | ենթարկվում են՝ ախտահանման /նշում 9/, | | | | 3 | Հղում 2, կետ 59 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 13.2 | Նախամանրէազերծման /նշում 9, | | | | 3 | Հղում 2, կետ 59 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 13.3 | Մանրէազերծման /նշում 9/, | | | | 3 | Հղում 2, կետ 59 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 13.4 | Երկրորդային աղտոտումը բացառող պայմաններում՝ պահպանման , | | | | 3 | Հղում 2, կետ 59 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 14. | Ախտահանման նպատակով օգտագործվող միջոցները ՀՀ ԱՆ կողմից թույլատրված են օգտագործման համար և օգտագործվում են համաձայն գործող ուղեցույցի: | | | | 2 | Հղում 2, կետ 61 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 15. | Ախտահանման, նախամանրէազերծումային մշակման, քիմիական մանրէազերծման նպատակով գործիքները ընկմվում են լուծույթների մեջ, հանվող մասերը ընկղմվում են հանած վիճակում, իսկ խողովակներն ու խոռոչները լցվում են աշխատանքային լուծույթներով: | | | | 2 | Հղում 2, կետ 62 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 16. | Բազմակի օգտագործման բժշկական նշանակության առարկաների վրայից ախտահանիչների մնացորդները լվացում են ախտահանիչի հրահանգի համաձայն: | | | | 2 | Հղում 2, կետ 64 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 17. | Յուրաքանչյուր հաճախորդից հետո ծայրակալները մշակվում են ՝ սահմանված կարգով /նշում 10/: | | | | 3 | Հղում 2, կետ 63 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 18 | Ստոմատոլոգիական դրոշմների, պատրաստվող պրոթեզների ախտահանումը կատարվում է յուրաքանչյուր փորձարկումից հետո՝ սահմանված կարգով /նշում 11/: | | | | 2 | Հղում 2, կետ 65 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 19. | Ստոմատոլոգիական արտածծող համակարգերի վարակազերծումը կատարվում է աշխատանքի վերջում՝ սահմանված կարգով /նշում 12/: | | | | 2 | Հղում 2, կետ 66 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20. | Հարթեցնող գչիրները (բոռեր), կարբոռունդային քարերը, առարկայական ապակիները ենթարկվում են մաքրման, ախտահանման և մանրէազերծման: | | | | 3 | Հղում 2, կետ 67 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 21. | Ֆիզիոթերապևտիկ բաժանմունքներում ախտահանման են ենթարկվում հանվող լնդային և կետային էլեկտրոդները, կարճալիքային ուլտրամանուշակագույն ճառագայթիչ (ԿՈՒՃ) սարքավորման տուբուսը, լազերային ճառագայթիչ սարքի լուսահաղորդիչը, դարսոնվալիզացիայի ապակյա էլեկտրոդները: | | | | 2 | Հղում 2,կետ 68 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 22 | Բերանի խոռոչի ապլիկացիայի ժամանակ օգտագործվում է մանրէազերծված փափուկ նյութ: | | | | 3 | Հղում 2, կետ 68 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 23 | Ախտահանումից հետո կատարվում է նախամանրէազերծումային մշակում /նշում 13/: | | | | 3 | Հղում 2,կետ 69 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 24. | Նախամանրէազերծումային մշակման որակը գնահատվում է ազոպիրամի կամ ամիդոպիրինի փորձի միջոցով արյան մնացորդային քանակության առկայության, ինչպես նաև ֆենոլֆտալեինային փորձով հիմնային լվացող միջոցների մնացորդային քանակների առկայության որոշմամբ /նշում 14/: | | | | 2 | Հղում 2, կետ 70 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 25. | Նախամանրէազերծումային մշակման որակի ներքին հսկողությունը ամենօրյա տվյալները գրանցվում են մատյանում /նշում 15/: | | | | 2 | Հղում 2, կետ 71 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 26. | Բոլոր այն իրերը, որոնք շփվում են վերքային մակերեսների, արյան և ներարկվող պատրաստուկների, վնասված լորձաթաղանթների հետ կամ որոնք օգտագործման գործընթացում կարող են առաջացնել լորձաթաղանթի վնասում՝ ենթարկվում են մանրէազերծման: /նշում 16, որոշիչ/: | | | | 3 | Հղում 2, կետեր 72, 73,75,76,77 | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 27. | Գործիքների մանրէազերծման գործընթացը գրանցվում է համապատասխան գրանցամատյանում՝ /նշում 17/: | | | | 2 | Հղում 2, կետ 74, 88 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 28. | Գոլորշային և չորօդային մանրէազերծիչների | | | | 2 | Հղում 2,կետ | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանքային ռեժիմի հսկողության համար օգտագործվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ զգայորոշիչ` համաձայն վերջինիս կից հրահանգի: | | | | | 78. | | բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 29. | Քիմիական միջոցների լուծույթներով մանրէազերծման ժամանակ բոլոր գործողությունները կատարվում են` պահպանելով ասեպտիկայի կանոնները` | | | | | | | |
| 29.1 | օգտագործվում են մանրէազերծված տարողություններ մանրէազերծված գործիքների պահպանման համար, | | | | 2 | Հղում 2, կետ 79. | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 29.2 | մանրէազերծված ջուր` մանրէազերծող լուծույթի մնացորդների լվացման համար, | | | | 2 | Հղում 2, կետ 79. | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 30. | Մանրէազերծված իրերի լվացումը կատարվում է օգտագործվող միջոցի հրահանգի պահանջներին համապատասխան: | | | | 2 | Հղում 2, կետ 79. | Տեսողական, լաբորատոր | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 31. | Գոլորշային, օդային, գազային և պլազմային մեթոդներով մանրէազերծումը կատարում են փաթեթավորած` օգտագործելով միանվագ օգտագործման փաթեթավորող նյութեր կամ բազմակի օգտագործման բեռնարկղեր, որոնք թույլատրված է օգտագործել մանրէազերծման կոնկրետ մեթոդի դեպքում /նշում 18, որոշիչ/: | | | | 3 | Հղում 2, կետ 80. | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 32. | Փաթեթավորված ձևով մանրէազերծված իրերը պահվում են պահարաններում կամ աշխատանքային սեղանների վրա` պահպանելով պահպանման ժամկետը /նշում 19/: | | | | 3 | Հղում 2, կետ 81 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 33. | Չփաթեթավորված մանրէազերծված գործիքները պահպանում են մանրէասպան (ուլտրամանուշակագույն լամպերով հագեցած) խցիկում (արկղում) կամ մանրէազերծված բիքսերում /նշում 20/: | | | | 3 | Հղում 2, կետ 83, 84 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 34. | Մանրէասպան խցիկում կամ բիքսերում մանրէազերծված բժշկական նշանակության իրերը | | | | 2 | Հղում 2, կետ 83 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | թույլատրվում է պահել արկղի/բիքսի բացելուց հետո 6 ժամից ոչ ավելի: | | | | | | | իրականացնող կազմակերպություններում |
| 35. | Մանրէազերծված իրերը բժշկի ատամնաբուժական սեղանին մանրէազերծված տեփուրի մեջ դրվում է ստոմատոլոգիական բուժօգնության և սպասարկման դիմած անձանց բժշկական միջամտությունից անմիջապես առաջ /Նշում21/: | | | | 2 | Հղում 2, կետ 85 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 36. | Վիրահատարանում մանրէազերծ սեղան բացելու դեպքում : | | | | | | | |
| 36.1 | բոլոր գործողությունները կատարվում են մանրէազերծված խալաթով, դիմակով և ձեռնոցներով, մանրէազերծված սավանի օգտագործմամբ, | | | | 2 | Հղում 2, կետ 86 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 36.2 | Նշվում է սեղանի բացման օրը և ժամը, | | | | 2 | Հղում 2, կետ 86 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 36.3 | Մանրէազերծ սեղանի գործիքների օգտագործումը թույլատրվում է 6 ժամվա ընթացքում /Նշում 22/: | | | | 2 | Հղում 2, կետ 86 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 37. | Բժշկական նշանակության մանրէազերծված իրեր ը չեն օգտագործվում պահպանման թույլատրելի ժամկետի լրանալուց հետո: | | | | 2 | Հղում 2, կետ 87 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 38. | Վիրահատարանում բժիշկները և վիրահատությանը մասնակցող այլ անձինք աշխատում են մանրէազերծված խալաթներով, կամ այլ հատուկ համազգեստով, դիմակներով, միանվագ օգտագործման մանրէազերծ ձեռնոցներով: | | | | 2 | Հղում 2, կետ 89,90 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 39. | Վիրահատարանում աշխատող անձնակազմի կոշիկները պատրաստված են ախտահանման ենթակա նյութից: | | | | 2 | Հղում 2, կետ 89 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 40. | Ստոմատոլոգիական կաբինետների բուժանձնակազմը բժշկական միջամտությունների ժամանակ աշխատում է խալաթներով, կամ այլ հատուկ համազգեստով, | | | | 2 | Հղում 2, կետ 90 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 40.1 | դիմակներով, անհրաժեշտության դեպքում պաշտպանիչ ակնոցներով, | | | | 2 | Հղում 2, կետ 90 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | իրականացնող կազմակերպություններում |
| 40. 2 | միանվագ օգտագործման ձեռնոցներով: | | | | 2 | Հղում 2, կետ 90 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |
| 41. | Մանրէազերծվածության որակի հսկողության նպատակով ստոմատոլոգիական բժշկական կազմակերպության կողմից ամիսը մեկ անգամ իրականացվում է ներքին (լաբորատոր)՝ հսկողություն /Նշում 23/: | | | | 2 | Հղում 2, կետ 93 | Տեսողական | Կիրառվում է միայն ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում |

Հղում 1 ՀՀ առողջապահության նախարարի 2009 թ.,Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) ներհիվանդանոցային վարակի կազմակերպման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման թիվ 3.1.6-011-09 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին։ թիվ 03-Ն հրաման

Հղում 2 ՀՀ առողջապահության նախարարի 2011թ. ,Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տեղակայմանը, կառուցվածքին, կահավորմանը, շահագործմանը, անձնակազմի աշխատանքի պահմանմանը և անհատական հիգիենային, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվողէ N **3.1.1.-024-2011** սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին։ N 25-Ն հրաման

Նշում 1. Մանրէազերծման սենքի մակերեսը որոշվում է ելնելով ավտոկլավի տեսակից և քանակից, բայց 1 ավտոկլավի համար 4 մ2-ից ոչ պակաս, Գործիքների լվացման և մանրէազերծման համար պահանջվում է առնվազն 6 մ2 մակերեսով տարածք (2 մ2՝ 1 չորացնող պահարանի համար, 4 մ2՝ գործիքների լվացման և մշակման համար):

Նշում 2. Գործիքների լվացման և մանրէազերծման սենքը առնվազն 6 մ2 մակերես ունի (2 մ2՝ 1 չորացնող պահարանի համար, 4 մ2՝ գործիքների լվացման և մշակման համար):

Նշում 3. **ԱՂՅՈՒՍԱԿ 4**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ, ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ**

| N | Ախտա-հանման մեթոդ | Ախտահանող գործոն | Ախտահանման ռեժիմ | | | Առաջարկութ-յուններ օգտագործման վերաբերյալ | Ախտա-հանման եղանակ | Օգտա-գործվող սարքա-վորումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Լուծույթի ջերմաս-տիճան ($^{0}$C) | Լուծույթի խտութ-յուն (%) | Վարակա-զերծման տևողու-թյուն (րոպե) | | | |
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. |
| 1. | Քիմիական | Գլուտարալ | 18$^{0}$ C -ից ոչ պակաս | Չնոսրաց-ված | 15 | Առարկաներ, գործիքներ՝ | Ամբող-ջությամբ | Ապակյա, պլաստմասսե |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գլուտարալ H | | | 15 | պատրաստված չքայքայվող մետաղներից, ռետինից, պլաստմասսայից, ապակուց | ընկղմվում է լուծույթի մեջ | կամ արծնա-պատված (արծնա-պատվա-ծությունը չխախտված) փակ տարաներ |
| | | Գլուտարային ալդեհիդ | | 2.5 | 30 | | | |
| | | Ջրածնի գերօքսիդ | | 6.0 | 60 | | | |
| | | Ջրածնի գերօքսիդ լվացող միջոցի հետ | | 6.0<br>0.5 | 60 | | | |
| | | Քլորամին | | 3.0 | 60 | | | |
| | | Նատրիումի հիպոքլորիդ | | 0.5 | 60 | Առարկաներ, գործիքներ՝ պատրաստված ապակուց, պլաստմասսայից, սիլիկոնային և բնական կաուչուկից, ռետինից | | |
| 2. | Գոլորշային | Ջրային հագեցված գոլորշի ճնշման տակ P =0.05ՄՊա (0.5կգ վրկ/սմ$^2$) | 110"2 | - | 20 | Առարկաներ, գործիքներ՝ պատրաստված մետաղներից, ապակուց, ռետինից, լատեքսից և ջերմակայուն պոլիմերային նյութերից | Կատարվում է տուփերում | Գոլորշային ախտահանման խցիկ |
| 3. | Օդային | Չոր, տաք օդ | 120"4 | - | 45 | Ապակյա, մետաղյա առարկաներ, գործիքներ | Կատարվում է չփաթե-թավորված, տեփուր-ներում | Օդային մանրէազերծիչ |
| 4. | Եռացում | Թորած ջուր | եռման պահից | - | 30 | Առարկաներ, | Լրիվ | Վարակա- |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ծորած ջուր երկածխա-թթվային նատրիումի (կերակրի սոդա) 2%-անոց լուծույթի մեջ | | - | 15 | գործիքներ՝ պատրաստված ապակյա, մետաղյա, ռետինե, ջերմակայուն պոլիմերային նյութերից | ընկղմել ջրի մեջ | զերծում՝ եռացնելով |

Նշում 4.

**ԱՂՅՈՒՍԱԿ 5**

**ԼՈՒԾՈՒՅԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

| Բաղադրամասերի անվանում | Լվացող միջոցի 1դմ$^3$ լուծույթ պատրաստելու համար անհրաժեշտ բաղադրամասերի քանակ | Կիրառման ոլորտ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Լվացող միջոց, գրամ<br>Խմելու ջուր, սմ$^3$ | 5<br>995 | Ձեռքով մաքրելու դեպքում |
| Ջրածնի գերօքսիդի լուծույթ, սմ$^3$<br>------//----- 27,5%<br>------//----- 30,0%<br>------//----- 32,5%<br>------//----- 35%<br>------//-----37,5%<br>------//-----40,0%<br>Լվացող միջոց, գր<br>Խմելու ջուր | <br><br>17<br>15<br>14<br>13<br>12<br>11<br>5<br>մինչև 1 դմ$^3$ | Ձեռքով և ուլտրաձայնի օգտագործմամբ մաքրման դեպքում |
| Ջրածնի գերօքսիդի լուծույթ հետևյալ խտությունների դեպքում՝<br>-----//-----27,5%<br>-----//-----30,0%<br>-----//-----32,5% | 17 | Ձեռքով և ուլտրաձայնի օգտագործմամբ մաքրման դեպքում |

| | | |
|---|---|---|
| -----//-----35,0% | 15 | |
| -----//-----37,5% | 14 | |
| -----//-----40,0% | 13 | |
| Լվացող միջոց, գր | 12 | |
| Քայքայման ինհիբիտոր | 11 | |
| նատրիումի օլեատ, գր | 5 | |
| Խմելու ջուր | 1,4 | |
| | մինչև 1 դմ$^3$ | |

**ԱՂՅՈՒՍԱԿ 6**

## ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ ՁԵՌՔՈՎ

| Մաքրման գործընթացներ | Մաքրման ռեժիմ | | | | | Օգտա-գործվող սարքավո-րումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | լուծույթի նախնական ջերմաստիճան, $^0$C | | | մեկ գործիքի մաքրման տևողություն, րոպե | | |
| | | անվանա-կան նշանա-կություն | թույլա-տրելի շեղում | անվա-նական նշանա-կություն | թույլա-տրելի շեղում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Օգտագործված գործիքները մինչ ողողելը դնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի մեջ՝ համաձայն վերջինիս ուղեկցող հրահանգի | | | | | | Թաս, տակառիկ, ավազան |
| Նախնական ողողում հոսող ջրով | | - | - | 3,0 | +1,0 | Թաս, տակառիկ, ավազան |
| Գործիքների թրջում լվացող լուծույթում | լվացող միջոցի լուծույթի | 50 | "5 | 15,0 | +1,0 | Թաս, տակառիկ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| լրիվ ընկղմամբ և ներքին բաց խողովակների լրիվ լցմամբ (կաթոցիչի օգնությամբ) | կիրառման դեպքում | | | | | |
| | ջրածնի գերօքսիդ, սինթետիկ լվացող միջոցի հետ | 50 | "5 | 15,0 | +1,0 | Թաս, տակառիկ |
| Յուրաքանչյուր գործիքի արտաքին մակերեսի մաքրում խոզանակով<br>Ներքին խողովակի մաքրում ներարկիչով | | -<br>- | -<br>- | 2,0<br>1,5 | +0,5<br>+0,5 | Թաս, տակառիկ |
| Պարզաջրում հոսող ջրով (կախված մաքրող միջոցի տեսակից) | լվացող միջոցի դեպքում | - | | 3,0 | +1,0 | Թաս, տակառիկ, ավազան |
| Պարզաջրում թորած ջրով | | - | - | 1,0 | "0,5 | Թաս, տակառիկ |
| Վակուումային չորացում | | - | - | մինչև խոնավության լրիվ վերանալը | | Ջրաշթային պոմպ |

**ԱՂՅՈՒՍԱԿ 7**

**ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄԱՅԻՆ ՄԱՔՐՈՒՄ ՈՒԼՏՐԱՁԱՅՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ**

| Մաքրման գործընթացներ | Մաքրման ռեժիմ | | | | | Օգտագործ-վող սարքա-վորումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | լուծույթի նախնական ջերմաստիճան, $^0C$ | | | մեկ գործիքի մաքրման տևողություն, րոպե | | |
| | | անվա-նական նշանա-կու-թյուն | թույլա-տրելի շեղում | անվանա-կան նշանակու-թյուն | թույլա-տրելի շեղում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Օգտագործված գործիքները մինչ ողողելը դնել ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի մեջ՝ համաձայն վերջինիս ուղեկցող հրահանգի | | | | | | Թաս, տակառիկ, ավազան |
| Նախնական ողողում հոսող ջրով | | - | - | 3,0 | 1,0 | Թաս, տակառիկ, ավազան |
| Գործիքների մշակում լվացող լուծույթում ուլտրաձայնի օգտագործմամբ լրիվ ընկղմամբ և ներքին բաց խողովակները լուծույթով լրիվ լցմամբ | լվացող միջոցի լուծույթի օգտագործման դեպքում | 50 | "5 | 10,0 | +1,0 | Թաս, տակառիկ |
| | ջրածնի գերօքսիդ և սինթետիկ | 50 | "5 | 10,0 | +1,0 | Ուլտրա-ձայնային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | լվացող միջոց պարունակող լվացող լուծույթի օգտագործման դեպքում | | | | | սարք |
| Պարզաջրում հոսող ջրով | լվացող նյութի օգտագործման դեպքում | - | - | 3-10,0 | +1,0 | Թաս, տակառիկ, ավազան |
| Ողողում թորած ջրով | | - | - | 1,0 | +0,5 | Թաս, տակառիկ |
| Վակուումային չորացում | | - | - | Մինչև խոնավության լրիվ վերանալը | | Ջրաշթային պոմպ |

Նշում 5. Ախտահանման ենթակա են նաև հեպատիտ Բ-ով, Ց-ով և չճշտված ախտորոշումով հեպատիտներով հիվանդների (վիրուսային հեպատիտի կասկածով), ինչպես նաև ավստրալիական հակածնակիրների ու ՄԻԱՎ և այլ վարակակիրների մոտ վիրահատությունների, ներարկումների և այլ բժշկական միջամտությունների ժամանակ օգտագործված առարկաները՝ նախամանրէազերծումային մշակումից և մանրէազերծումից առաջ:
Նշում 6.

**ԱՂՅՈՒՍԱԿ 8**

**ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴ (ՋՐԱՅԻՆ ՀԱԳԵՑԱԾ ԳՈԼՈՐՇԻ, ՃՆՇՄԱՆ ՏԱԿ)**

| Մանրէազերծման ռեժիմ | | | | | | | | Մանրէազերծման պայմաններ | Մանրէազերծվածության պահպանման տևողություն | Օգտագործվող սարքավորումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գոլորշու ճնշումը մանրէազերծիչ խցիկում | | Աշխատանքային ջերմաստիճան մանրէազերծման խցիկում | | Մանրէազերծման տևողություն | | | | | | |
| անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | ձեռքով կամ կիսաավտոմատ ղեկավարում | ավտոմատ ղեկավարումով | | | | | |
| | | | | | անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 0,20 (2,0) | "0,02 ("0,2) | 132 | "2 | 20 | 20 | +2 | Խորհուրդ է տրվում չքայքայվող մետաղից, | Մանրէազերծումը կատարվում է ֆիլտրով և առանց ֆիլտրի | Մանրէազերծվածության պահպանման | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ապակուց, գործվածքից, ռետինից պատրաստված առարկաների համար: | մանրէա-զերծիչ տուփերում կամ բյազե, մագաղաթե, պարկային չծծեցված և ծծեցված, գոլորշակայուն թղթե կրկնակի փաթեթներում: | տևողությունը 8-րդ կետում նշված փաթեթներում առանց ֆիլտրի մանրէազերծիչ տուփերում մանրէա-զերծված առարկա-ներինը 3 օր է, իսկ ֆիլտրով մանրէա-զերծիչ տուփերում մանրէա-զերծված առարկա-ներինը՝ 20 օր: | |
| 0.11 (1.1) | "0.02 ("0.02) | 120 | +2 | 45 | 45 | "3 | Լատեք-սային և ռետինե պոլիմե-րային բժշկական առարկաներ | Նույնը | Նույնը | |

Նշում 6.

**ԱՂՅՈՒՍԱԿ 9**

**ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՕԴԱՅԻՆ ՄԵԹՈԴ (ՉՈՐ ՏԱՔ ՕԴ)**

| Մանրէազերծման ռեժիմ | | Կիրառելի-ություն | Մանրէազերծման պայմաններ | Մանրէազերծ-վածության պահպանման | Օգտա-գործվող սարքա-վորումներ |
|---|---|---|---|---|---|
| Աշխատանքային ջերմաստիճանը մանրէազերծիչ | մանրէազերծման տևողություն | | | | |

| խցիկում, $^0C$ | | | | | | տևողություն | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվա-նական նշանա-կություն | թույլատ-րելի շեղում | անվա-նական նշանակու-թյուն | թույլա-տրելի շեղում | | | | |
| 180 | +2 | 60 | +5 | Խորհուրդ է տրվում կիրառել մետաղյա, ապակյա առարկաներ: Մետաղյա, ապակյա առարկաների և սրածայր իրերի՝ ասեղ, մկրատ, սայրերի համար | Մանրէազերծման ենթակա են չոր առարկաները: Մանրէազերծումը կատարվում է փաթեթավորված պարկերում կամ չփաթեթավորված՝ բաց տարողութ-յուններում | Փաթեթավորված առարկաների մանրէա-զերծվածությունը պահպանվում է 3 օր: Չփաթեթավորված (բաց տարողութ-յուններում) առարկաները օգտագործվում են մանրէազերծումից անմիջապես հետո: | Օդային մանրէա-զերծիչ |
| 160 | +2 | 150 | +5 | | | | |

**ԱՂՅՈՒՍԱԿ 10**

**ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈԴ**

**ԱՂՅՈՒՍԱԿ 10ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱ**

Ն

| Մանրէա-զերծիչ ազդակ | Մանրէազերծման ռեժիմ | | | | Կիրառե-լիություն | Մանրէազերծման պայմաններ | Օգտա-գործվող սարքավո-րումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ջերմաստիճան, $^0C$ | | տևողություն, րոպե | | | | |
| | անվա-նական նշանա-կություն | թույլատ-րելի շեղում | անվա-նական նշանա-կություն | թույլատ-րելի շեղում | | | |
| Ասեպտիկ պայման-ներում ջրածնի գերօքսիդի | 18-ից ոչ պակաս 50 | -<br>"2 | 360<br>180 | "5<br>"5 | Խորհուրդ է տրվում պոլիմերային նյութերից | Մանրէազերծումը կատարվում է արտադրանքը լուծույթի մեջ լրիվ | Ապակյա պլաստմասսե կամ արծնապատ (արծնապատ- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6%-անոց<br>լուծույթ | | | | | պատրաստված,<br>ռետինե,<br>ապակե,<br>չքայքայվող<br>մետաղե<br>առարկաների<br>համար | ընկղմամբ,<br>մանրէազերծման տևողությամբ,<br>որից հետո պարզաջրել<br>մանրէազերծված ջրով:<br>Մանրէազերծված<br>սավանում<br>փաթեթավորված մանրէազերծիչ<br>տուփերում մանրէազերծելու<br>դեպքում<br>պահպանման<br>ժամկետը 3 օր է:<br><br>Ապակյա<br>պլաստմասսե<br>կամ արծնապատ (արծնապատ-<br>վածությունը<br>չխախտված փակ տարրողութ-<br>յուններ)ությունը<br>չխախտված փակ տարրողութ-<br>յուններ) | վածությունը<br>չխախտված փակ<br>տարրողութ-<br>յուններ) |

Նշում 7. Մեխանիկական նախամանրէազերծումային մշակումն իրականացվում է շիթային, ռոտացիոն մեթոդներով, խոզանակով կամ ուլտրաձայնով՝ սահմանված կարգով՝ թույլատրված մակերեսային ակտիվ նյութերի և այլ հավելումների օգտագործմամբ: **Մեխանիկակ**ան մաքրու**մը կատարվում է սարքավորմանն ուղեկցող շահագործման հրահանգի համապատասխան: Ռետինե առարկաների խոզանակով մաքրում չի կատարվում:**

Նշում 8. Բուժկանխարգելիչ կազմակերպությունում մանրէաբանական լաբորատորիայի բացակայության դեպքում հետազոտություններն իրականացվում են տվյալ տարածքի որևէ մանրէաբանական լաբորատորիայում՝ պայմանագրային հիմունքներով:

Նշում 9.

## ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ ՁԵՌՔՈՎ

| Մաքրման գործընթացներ | Մաքրման ռեժիմ | | | | | Օգտա-գործվող սարքա-վորումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | Լուծույթի նախնական ջերմաստիճան, $^{0}C$ | | | Մեկ գործիքի մաքրման տևողություն, րոպե | | |
| | | Անվանական նշանա-կության | Թույլա-տրելի Շեղում | Անվանական նշանակու-թյան | Թույլա-տրելի շեղում | |
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Օգտագործված գործիքները մինչ ողողելը դնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի մեջ՝ համաձայն վերջինիս ուղեկցող հրահանգի | | | | | | Թաս, տարո-ղություն |
| Նախնական ողողում հոսող ջրով | | | | 3.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն |
| Գործիքների թրջում լվացող լուծույթում լրիվ ընկղմամբ | լվացող միջոցի լուծույթի կիրառման դեպքում | 50 | ±5 | 15.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն |
| | Ջրածնի գերօքսիդ, սինթետիկ լվացող միջոցի հետ | 50 | ±5 | 15.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Յուրաքանչյուր գործիքի արտաքին մակերեսի մաքրում խոզանակով | | | | 2.0 | +0.5 | Թաս, տարո-ղություն |
| Պարզաջրում հոսող ջրով (կախված մաքրող միջոցի տեսակից) | | | | 3.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն |
| Ողողում թորած ջրով | | | | 1.0 | ±0.5 | Թաս, տարո-ղություն |
| Չորացում | | | | Մինչև խոնավության լրիվ վերանալը | | Չորացնող պահարան |

**ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄԱՅԻՆ ՄԱՔՐՈՒՄ ՈՒԼՏՐԱՁԱՅՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ**

| Մաքրման գործընթացներ | Մաքրման ռեժիմ | | | | | Օգտա-գործվող սարքա-վորումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | Լուծույթի նախնական ջերմաստիճան, $^{0}$C | | | Մեկ գործիքի մաքրման տևողություն, րոպե | | |
| | | Անվանական նշանա-կության | Թույլա-տրելի շեղում | Անվա-նական նշանա-կության | Թույլա-տրելի շեղում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Օգտագործված գործիքները մինչ ողողելը դնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից թույլատրված որևէ ախտահանիչ միջոցի մեջ՝ համաձայն վերջինիս ուղեկցող հրահանգի | | | | | | Թաս, տարո-ղություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Նախնական ողողում հոսող ջրով | | | | 3.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն |
| Գործիքների թրջում լվացող լուծույթում լրիվ ընկղմամբ | Լվացող միջոցի լուծույթի կիրառման դեպքում | 50 | ±5 | 10.0 | +1.0 | Թաս, տարո-ղություն Ուլտրա-ձայնային սարք |
| | Ջրածնի գերօքսիդ, սինթետիկ լվացող միջոցի հետ | 50 | ±5 | 10.0 | +1.0 | |
| Պարզաջրում հոսող ջրով | | | | 3.0-10.0 | +1.0 | Թաս, տարողու-թյուն |
| Ողողում թորած ջրով | | | | 1.0 | ±0.5 | Թաս, տարողու-թյուն |
| Չորացում | | | | Մինչև խոնավության լրիվ վերանալը | | Չորացնող պահարան |

## ԼՎԱՑՈՂ, ԱԽՏԱՀԱՆՈՂ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՂ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| Բաղադրամասերի անվանում | Լվացող միջոցի 1 դմ$^3$ լուծույթ պատրաստելու համար անհրաժեշտ բաղադրամասերի քանակ | Կիրառման ոլորտ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Ջրածնի գերօքսիդի լուծույթ - 30%<br>Լվացող միջոց | 20 մլ<br>5 գ<br>975 մլ | Ձեռքով և ուլտրաձայնային օգտագործմամբ լվացման դեպքում |

| | | |
|---|---|---|
| Խմելու ջուր | | |
| Ջրածնի գերօքսիդ 30% | 100 մլ | Գործիքների ախտահանման համար |
| Լվացող նյութ | 5 գ | |
| Խմելու ջուր | 895 գ | |
| Ջրածնի գերօքսիդ 30% | 200 մլ | 6% ջրածնի գերօքսիդի լուծույթը նախատեսվում է մանրէազերծման համար |
| Թորած ջուր | 800 մլ | |

## ՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄ ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ

| Մանրէա-զերծվող նյութի անվանում | Մանրէազերծման ռեժիմ | | | | | | Մանրէազերծման պայմաններ | Մանրէազերծ-վածության պահպանման տևողություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գոլորշու ճնշումը մանրէազերծիչ խցիկում | | Աշխատանքային ջերմաստիճան | | Մանրէազերծման տևողություն | | | |
| | անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | անվանական նշանակություն | թույլատրելի շեղում | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| Գործվածք, չքայքայվող մետաղից և ապակուց պատրաստված գործիքներ, սարքա-վորումների մասեր, | 0.20 /2.0/ | ±0.02 /±0.2/ | 132 | ±2 | 20 | +2 | Գործվածք, չքայքայվող մետաղից և ապակուց պատրաստված գործիքներ, սարքավորումների մասեր, ռետինից պատրաստված | մանրէազերծիչ տուփերում մանրէազերծված առարկաների պահպանման տևողությունը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ռետինից պատրաստված առարկաներ | | | | | | | առարկաներ | |
| Լատեքսային և ռետինե պոլիմերային բժշկական առարկաներ | 0.11 /1.1/ | ±0.2 /±0.02/ | 120 | +2 | 45 | ±3 | | |

## ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՕԴԱՅԻՆ ՄԵԹՈԴ (ՉՈՐ ՏԱՔ ՕԴ)

| Կիրառելիություն | Մանրէազերծման ռեժիմ | | | | Մանրէազերծման պայմաններ | Մանրէազերծ-վածության պահպանման տևողություն |
|---|---|---|---|---|---|---|
| | Աշխատանքային ջերմաստիճանը մանրէազերծիչ խցիկում, $^{0}C$ | | Մանրէազերծման տևողություն | | | |
| | անվա-նական նշանա-կություն | թույլա-տրելի շեղում | անվա-նական նշանա-կություն | թույլա-տրելի շեղում | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Մետաղից պատրաստված վիրաբուժական և ատամնաբուժական գործիքներ, մետաղյա և | 180 | ±2 | 60 | ±5 | Մանրէազերծվում են չոր առարկաները՝ փաթեթավորված կամ չփա-թեթավորված | Փաթեթավորված գործիքները թույլատրվում է պահպանել 3 օր: Չփաթեթավորված գործիքները |
| | 160 | ±2 | 150 | ±5 | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ապակյա առարկաներ և իրեր | | | | | տարողություն-ներում | օգտագործվում են նույն օրը |

## ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈԴ

| Նյութի անվանում | Մանրէազերծման գործոն | Մանրէազերծման ռեժիմ | | Օգտագործվող սարքերը | Մանրէազերծման պայմանները |
|---|---|---|---|---|---|
| | | Ջերմաս-տիճան | Պահման ժամանակա-հատվածը րոպեներով | | |
| Հակակոռոզիոն մետաղներից գործիքներ | Փակ անոթում ջրածնի գերօքսիդի 6% լուծույթ, պիտանի է օգտագործման մինչև 7 օր | ոչ պակաս 18 | 360±5 | ապակյա կամ չվնասված էմալապատ փակ տարողու-թյուններ | Լրիվ ընկղմում են լուծույթում մանրէազերծման տևողության ընթացքում, որից հետո ողողում մանրէազերծված ջրով |

Նշում 10. Շփման եղանակով ախտահանումը թույլատրվում է այն իրերի համար, որոնք անմիջական շփում չունեն ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման դիմած անձի հետ կամ որոնց կառուցվածքային առանձնահատկությունները թույլ չեն տալիս կիրառել ընկղմման եղանակը (ծայրակալներ, տուրբինային ծայրակալների փոխանցիչներ, մեխանիկական ծայրակալների միկրոշարժիչներ, ատամների նստվածքաշերտերի հեռացման համար նախատեսված սարքի ծայրակալներ, խողովակներ, լուսատուներ և այլն): Այդ նպատակի համար արգելվում է օգտագործել ֆորմալդեհիդ պարունակող միջոցներ: Ծայրակալների կառուցվածքային առանձնահատկությունները հնարավորություն չեն ընձեռում լիարժեք ախտահանում կատարել: Դրա հետ կապված աղտոտվածության հեռացման և միկրոբային աղտոտվածության իջեցման նպատակով, յուրաքանչյուր հաճախորդից հետո ծայրակալների մշակումը թույլատրվում է կատարել հետևյալ կերպ. ծայրակալի ջուր մատակարարող խողովակը լվացվում է ջրով, հետո մանրէազերծող միջոցով, այնուհետև լվացվում է թորած ջրով և չորացվում օդով: Ծայրակալի

մակերեսը շփում են (միանվագ կամ կրկնակի մինչև տեսանելի աղտոտվածության հեռացումը) ջրով թրջված անձեռոցիկներով, որից հետո մշակում այդ նպատակով օգտագործման համար թույլատրված որևէ մանրէազերծող միջոցով (հաշվի առնելով ծայրակալի արտադրող ֆիրմայի առաջարկությունները), այնուհետև մաքրվում է թորած ջրով և չորացվում միանվագ օգտագործման անձեռոցիկով, և/կամ բարձր մակարդակի ախտահանում (օր.՝ ծայրակալների ախտահանման համար նախատեսված ուլտրամանուշակագույն ճառագայթներով ախտահանիչ սարք): Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում ծայրակալները մանրէազերծում են գոլորշային մանրէազերծիչում:

Նշում 11. Ստոմատոլոգիական դրոշմների, պատրաստվող պրոթեզների ախտահանումը կատարվում է յուրաքանչյուր փորձարկումից հետո, ատամնատեխնիկական լաբորատորիա ուղարկելուց առաջ և ատամնատեխնիկական լաբորատորիայից ստանալուց հետո՝ անմիջապես օգտագործելուց առաջ: Ախտահանիչ միջոցի ընտրությունը կախված է դրոշմի նյութի տեսակից: Ախտահանելուց հետո դրոշմվածքները և ատամի պրոթեզները լվանում են խմելու ջրով՝ ախտահանիչ միջոցների մնացորդների հեռացման համար:

Նշում 12. Ստոմատոլոգիական արտածծող համակարգերի վարակազերծումը կատարվում է աշխատանքի վերջում որի համար համակարգով մղում են այդ նպատակի համար նախատեսված ախտահանիչ միջոց, լուծույթով լցված համակարգը թողնում են որոշակի ժամանակ՝ համաձայն օգտագործվող նյութի հրահանգի պահանջների ցուցումների: Ախտահանումը վերջանալուց հետո լուծույթը համակարգից թափում են և լվանում հոսող ջրով:

Նշում 13. ախտահանումը կարող է համատեղվել նախամանրէազերծումային մշակման հետ մեկ գործընթացում (կախված ձեռքային կամ մեքենայացված՝ համաձայն օգտագործվող սարքի շահագործման հրահանգի) եղանակներով:

Նշում 14. Նախամանրէազերծումային մշակման որակը գնահատվում է ազոպիրամի կամ ամիդոպիրինի փորձի միջոցով արյան մնացորդային քանակության առկայության, ինչպես նաև ֆենոլֆտալեինային փորձով հիմնային լվացող միջոցների (միայն 8.5 pH ունեցող լվացող միջոցների օգտագործման ժամանակ)՝ մնացորդային քանակների առկայության որոշմամբ: Գործիքների նախամանրէազերծումային մշակման որակի հսկողության փորձերը իրականացվում են.

1) Ազոպիրամային փորձ

Ազոպիրամ ստանալու համար խառնում են իրար ամիդոպիրինի փոշի, թորած ջուր և ջրածնի գերօքսիդի 3%-անոց լուծույթ: Արյան հետքերի դեպքում առաջանում է մանուշակագույն երանգավորում, որը մի քանի վայրկյանի ընթացքում փոխվում է վարդայասամանի կամ գորշ գույնի:

2) Ֆենոլֆտալեինային փորձ

Լվացված գործիքին կաթեցվում է 3 կաթիլ ֆենոլֆտալեինի 1%-անոց սպիրտային լուծույթ: Լվացող նյութի մնացորդային քանակների առկայության դեպքում առաջանում է վարդագույն երանգավորում:

Նշում 15. Հսկման ենթակա են միաժամանակյա մշակված յուրաքանչյուր անուն գործիքների 1%-ը, բայց ոչ պակաս 3 նմուշից:

Հավելված 5

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՒՄԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆ**

| Նախամանրէա-զերծումային մշակման ենթարկված | Նախամանրէա-զերծումային մշակման ենթարկված | Նախամանրէա-զերծումային մշակման որակի հսկողության | Նախամանրէա-զերծումային մշակման որակի հսկողության արդյունքները | Նախամանրէա-զերծումային մշակման որակի հսկողության | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|

| բժշկական նշանակության գործիքների (առարկաների) անվանում | բժշկական նշանակության գործիքների (առարկաների) քանակ | ենթարկված բժշկական նշանակության գործիքների (առարկաների) քանակ | | | պատասխանատու | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Արյան հետքերի առկայություն | Լվացող հեղուկի հետքերի առկայություն | | |

Նշում 16. Ստոմատոլոգիական բժշկական կազմակերպություններում պարտադիր մանրէազերծման ենթակա են բժշկական նշանակության հետևյալ իրերը.

1) ստոմատոլոգիական գործիքները. ունելիները, զոնդերը, մածկիչներ, սեղմիչները, արտաքերիչները, հարթիչները, շապիկհանիչները, սկեյլերները, ստոմատոլոգիական հայելիները, գչիրները (այդ թվում՝ ալմազապատ), բոլոր տեսակի ծայրակալները, օրթոդոնտիայում կիրառվող գործիքները, գամիկները (շտիֆտ), ստոմատոլոգիական սկավառակները, ֆրեզները, անջատող մետաղական թիթեղները, դրոշմագդալները, պարօդոնտոլոգիական վիրաբուժական գործիքները (քերիչները), ատամների նստվածքների հեռացման տարբեր ձևի կեռիկները և այլն, արմատախողովակի մեխանիկական մշակման և լցավորման գործիքները/պլագերները, ստրեդերները, շաղափներ (ռիմերներ, ֆայլեր), կարպուլային ներարկիչները և տարբեր տեսակի աքցանները, փոշեծծիչները.

2) ուլտրաձայնային ծայրակալները և դրանց հագույցները (նասադկա), միկրոշարժիչների մեխանիկական ծայրակալների հանվող գլխիկները.

3) վիրաբուժական գործիքները. ատամնաբուժական աքցանները, քերող գդալները, ամբարձիչները (էլևատորները), մուրճիկները, իմպլանտացիայի գործիքները, նշտարաբռնիչները (նշտարները) լինում են միանվագ օգտագործման, կորնցանգները, մկրատները, սեղմիչները, վիրաբուժական հարթիչները.

4) մանրէազերծված բժշկական նշանակության իրերի տեփուրները, մանրէազերծված նյութերի հետ աշխատելու գործիքները, այդ թվում՝ ունելիները և դրանց պահելու տարրողությունները:

Բժշկական նշանակության ստոմատոլոգիակլյան իրերի մանրէազերծումն իրականացվում է ֆիզիկական (գոլորշային, օդային, ինֆրակարմիր, ուլտրամանուշակագույն ճառագայթում) կամ քիմիական (քիմիական միջոցների լուծույթների օգտագործում, գազային, պլազմային) մեթոդներով՝ այդ նպատակի համար օգտագործելով համապատասխան տիպի մանրէազերծող ազդակներ և սարքավորումների տեսակներ, որոնք թույլատրված են օգտագործման համար: Մանրէազերծման եղանակի ճիշտ ընտրությունը կախված է մանրէազերծվող իրի առանձնահատկությունից: Մանրէազերծումը կատարվում է այն ռեժիմով, որը նշված է կոնկրետ նյութի օգտագործման հրահանգում կամ մանրէազերծիչ սարքի տվյալ մոդելի շահագործման ուղեցույցում:

Ծայրակալները, ուլտրաձայնային ծայրադիրները և դրանց հավելումները, պլաստմասե պոչերով էնդոդոնտիայի գործիքները մանրէազերծում են գոլորշային մեթոդով: Ինֆրակարմիր ճառագայթման մեթոդով մանրէազերծում են մետաղյա իրերը, ստոմատոլոգիական աքցանները, միկրովիրաբուժական գործիքները, կարծր ձուլման բորերը, ալմաստային գլխիկները և սկավառակները, դրիլ բորերը, արմատախողովակ (կանալ) լցիչները և այլն: Քիմիական մեթոդով մանրէազերծումը քիմիական միջոցների լուծույթների օգտագործմամբ թույլատրվում է միայն այն իրերի համար, որոնց կառուցվածքում օգտագործվել են ջերմազգայուն նյութեր, որը հնարավորություն չի ընձեռում պաշտոնապես առաջարկվող այլ մատչելի մեթոդի օգտագործում: Այս մեթոդով մանրէազերծման ժամանակ օգտագործվում է գլյուտարալդեհիդների, թթվածնի կամ քլոր պարունակող բաղադրիչների պարունակությամբ լուծույթներ օժտված սպորասպան հատկությամբ:

Նշում 17. Հավելված 4

## ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՄԱՏՅԱՆ
## ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ (ՋՐԱՅԻՆ ՀԱԳԵՑԱԾ ԳՈԼՈՐՇԻ, ՃՆՇՄԱՆ ՏԱԿ)

Սկսված է _______________
Ավարտված է ______________
***Ձև N***

| Ամսաթիվ | Նյութի անվանում | Ավտոկլավի միացման ժամ | Մանրէազերծման ռեժիմ | | | | | Մանրէա-զերծման ստուգում | Ստորագրություն | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սկիզբ, ժամ | վերջ, ժամ | ճնշում (P) | ջերմաս-տիճան (t) | էքսպո-զիցիա (ժամա-նակ) | քիմիական | ավտոկլավն աշխա-տացնողի | ավտոկլավի ռեժիմի պատաս-խանատու |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |

***Ձև N***

## ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՄԱՏՅԱՆ
## ՉՈՐ ՕԴԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ

Մանրէազերծիչի մակնիշը ____________________
Սկսված է ________________
Ավարտված է ______________

| Ամսաթիվ | Մանրէազերծ-ված նյութի | | Մանրէազերծիչի միացման ժամ | Մանրէազերծման ռեժիմ | | | | Մանրէազերծման ռեժիմ | | Կատարող անձի ստորա-գրություն | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվա-նում | քանակ | | Սկիզբ, ժամ Վերջ, ժամ | Աստիճան Տևողություն | Սկիզբ, ժամ Վերջ, ժամ | Աստիճան Տևողություն | Քիմիական/ թեսթ | Ֆիզի-կական | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ջերմաս-տիճան | | Ջերմաս-տիճան | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |

Նշում 18. Գործիքների չփաթեթավորված մանրէազերծումը թույլատրվում է հետևյալ դեպքերում.

1) գործիքների մանրէազերծման համար քիմիական միջոցների լուծույթների օգտագործման ժամանակ,

2) ատամնաբուժական մետաղական գործիքների ջերմային-ինֆրակարմիր մեթոդով (գլասպերլինային) մանրէազերծելու դեպքում:

Նշում 19. Փաթեթների պահպանման ժամկետը  կախված է փաթեթավորող նյութի տեսակից, որը նշված է նրա օգտագործման հրահանգում:

Նշում 20. Ուլտրամանուշակագույն լամպերով հագեցած մանրէասպան խցերը թույլատրվում է օգտագործել միայն գործիքների պահպանման նպատակով մանրէներով երկրորդային աղտոտվածության վտանգը իջեցնելու նպատակով: Արգելվում է նման սարքավորումները օգտագործել գործիքների ախտահանման կամ մանրէազերծման նպատակով:

Նշում 21. Սեղանի աշխատանքային մակերեսի տակ` դարակի վրա, թույլատրվում է պահել ատամնաբուժական միջամտությունների կատարման տարբեր սարքեր, պլոմբանյութեր:

Նշում 22. Այդ ժամանակահատվածում մանրէազերծ սեղանի չօգտագործված նյութերը և գործիքները կրկնակի մանրէազերծում են:

Նշում 23. Մանրէաբանական լաբորատորիայի բացակայության դեպքում ինքնահսկողությունը իրականացվում է ցանկացած գործողության նման տեսակ իրականացնելու արտոնագրություն ունեցող մանրէաբանական լաբորատորիայի կողմից` պայմանագրային հիմունքներով: Մանրէաբանական հետազոտությունների համար վերցվում է.

1) արտաքին մակերեսների մանրէային աղտոտվածության որոշման նպատակով լվացուկներ, այդ թվում` ախտահանման որակի հսկողության համար (1 աշխատատեղին 3 լվացուկի հաշվարկով, բայց 10 լվացուկից ոչ պակաս) և ԱՑԽՄ-ի հայտնաբերման համար (1 աշխատատեղին 3 լվացուկի հաշվարկով, բայց 10 լվացուկից ոչ պակաս): Աշխատանքները համարվում են անբավարար յուրաքանչյուրի 10% և ավելի նմուշներում մանրէներ հայտնաբերվելու դեպքում.

2) լվացուկներ բուժգործիքներից մանրէազերծման որակի որոշման նպատակով (1 աշխատատեղին 3 լվացուկի հաշվարկով, բայց 10 լվացուկից ոչ պակաս), տեղում մանրէազերծված փափուկ գույքից` 1 աշխատատեղին 2 նմուշի հաշվարկով: Աշխատանքները համարվում են անբավարար անգամ 1 շեղումի դեպքում.

3) օդի նմուշներ այն աշխատասենյակներից, որտեղ մանրէային աղտոտվածության մակարդակները նորմավորված են: Աշխատանքները համարվում են անբավարար անգամ 1 շեղումի դեպքում:

Տեսուչի ստորագրություն ________________________________          Տնտեսվարողի ստորագրություն _____________________________